«Իրավունքը» բազմաթիվ նյութեր է տպագրել՝ նվիրված մշակույթի խնդիրներին՝ իր հնարավորության սահմաններում փորձելով արթուն պահել եւ ինչ-ինչ լուծումներ գտնել այդ հարցերի համար: Իսկ ինչպիսի՞ն է վիճակը մշակույթի բնագավառի կարեւորագույն ոլորտում՝ կադրերի պատրաստման գործում: Այդ կապակցությամբ մեր թղթակիցն այցելեց Արամ Իսաբեկյանին:

Արամ Էդվարդի Իսաբեկյան, Երեւանի Գեղարվեստի ինստիտուտի ռեկտոր, պրոֆեսոր եւ Նկարիչների միության գեղանկարի բաժանմունքի նախագահ:

Երկրորդ տարին է, ինչ աշխատում է Գեղարվեստի ինստիտուտի ռեկտորի պաշտոնում, մինչ այդ չորս տարի աշխատել է միացյալ գեղարվեստաթատերական ինստիտուտի պրոռեկտոր: Որդին է հայտնի նկարիչ Էդուարդ Իսաբեկյանի:

Ինստիտուտն ունի երկու ֆակուլտետ՝ կերպարվեստի, որի մեջ մտնում են գեղանկարի, քանդակի, գրաֆիկայի եւ արվեստի տեսության ու պատմության ամբիոնները եւ երկրորդը՝ դեկորատիվ-կիրառական ու դիզայնի ֆակուլտետը, որտեղ, բացի դեկորատիվ կիրառական արվեստներից, մտնում են իրենց մասնագիտացումները, այս տարի կավելանա նաեւ մետաղի մշակում, (ոսկերիչ-արծաթագործներ կպատրաստեն) եւ գործագործության (գորգ, գոբելեն եւ այլն), ունեն նաեւ հագուստի եւ կտորի մոդելավորման բաժին:



ԱՐԱՄ ԻՍԱԲԵԿՅԱՆ. «ԱՐՎԵՍՏԱԳԵՏԸ ՈՒԺԵՂ Է ԱՅՆՔԱՆՈՎ, ՈՐՔԱՆՈՎ ՀԱՅԵՆԱՍԵՐ Է»

-Ի՞նչ եք կարծում, այս տարի դիմորդները Գեղարվեստի ինստիտուտ կընդունվե՞ն մրցույթո՞վ:

-Արդեն ունենք կոնկուրս: Ճիշտն ասած՝ այս տարի ես մտավախություն ունեի, քանի որ, հասկանալի պատճառներով, երիտասարդությունը ձգտում է այն ուսումն ստանալ, որը հետագայում կապահովի իր կեցությունը: Այդ պատճառով կարող է մրցույթ չլինել: Ճիշտ է, եղած մրցույթը չի կարելի համեմատել տարիներ առաջ եղածի հետ, բայց հատկացված 100 տեղի համար 130 դիմում արդեն ունենք: Դիմորդների 90 տոկոսը աղջիկներ են: Ավարտելուց հետո, ցավոք, նրանցից ոչ բոլորն են, որ աշխատում են ստացած մասնագիտությամբ: Արվեստը նվիրում է պահանջում, իսկ կանայք ընտանիք կազմելուց եւ երեխա ունենալուց հետո հնարավորություն չեն ունենում զբաղվելու նախընտրած մասնագիտությամբ:

-Ձեր ինստիտուտում դասախոսական կազմը հիմնակա՞ն է, թե՞ ամեն առանձին դեպքում հրավիրում եք համապատասխան մասնագետի:

-Մեր ինստիտուտն ունի իր հիմնական դասախոսական կազմը, որը, այսպես ասած, զբաղվի, ինչը չի սիրում:

Բայց ունենք նաեւ հիանալի ուսանողներ: Եթե տարին նույնիսկ մեկ լավ նկարիչ տար մեր ինստիտուտը, ապա դարձյալ գովեստով կարելի էր խոսել Գեղարվեստի ինստիտուտի մասին: Համեմատելու համար ասեմ, որ Մերձավոր Արեւելքի երկրներում, մասնավորապես՝ Սիրիայում, նկարիչներ չկան ընդհանրապես, մի հատ սիմֆոնիկ նվագախումբ չկա: Ուզում էին սիմֆոնիկ նվագախումբ ստեղծել: Ընդգրկել էին 30 հայ, իսկ մնացածը՝ հրեա (Սիրիայում՝ հրեա): Այստեղ է, որ հիշում եմ Համո Սահյանի ասածներն այն մասին, որ մենք՝ հայերս, ոչ ոքի ոչնչով չենք կարող զարմացնել, բացի մեր մշակույթից: Բոլորին մենք արվեստ կարող ենք մատակարարել: Մի հինգ օրվա ընթացքում բոլոր հարեւան պետություններում կարող ենք միանգամից բացել հիանալի նկարների ցուցահանդեսներ: Մենք անթիվ, անհամար տաղանդավոր նկարիչներ ունենք:

-Հայ նկարիչների համար ո՞րն է հիմքերի այն հիմքը, որի հիման վրա նրանք պետք է ձեւավորվեն, աճեն...

-Ձեր հարցին ես կպատասխանեմ մեկ, բայց

«կմախքն» է... Հիմնական դասախոսական կազմը, որի անվան հետ է կապված մեր ինստիտուտի փառքն ու լավ համարումը, ցավոք, արդեն ծերացել է: Իհարկե, դժվարություններ կան, մեր աշխատավարձը բարձր չէ: Վճարովի համակարգից հավելյալ վճարումներ կատարում ենք, բայց դա այնքան էլ մեծ չէ, որ մարդկանց գայթակղի, որպեսզի նրանք թողնեն արվեստը եւ գան ինստիտուտում դասախոսելու: Ծանր աշխատանք է սերունդ դաստիարակելը, մանավանդ, եթե մարդը թողնում է արվեստանոցը եւ գալիս է ինստիտուտ, որտեղի աշխատավարձով տուն չես պահի: Բայց մենք ուղիներ ենք փնտրում այս ճգնաժամից դուրս գալու համար: Առավել եւս, որ շենքի, հարմարությունների եւ նյութատեխնիկական բազայի առումներով մեր ինստիտուտը գտնվում է շատ վատթար վիճակում: Այսպիսի ինստիտուտները միշտ եւ ամենուր հոգածության կարիք են ունեցել եւ ունեն: Ճիշտ է, ընկերներիցս մեկը, որը ժամանակին Մոսկվա էր տեղափոխվել, ուզում է մեր ինստիտուտի առաջին հարկում ցուցասրահ բացել, նախկին «Երեւաննախագիծ» ինստիտուտի շենքը մեզ են տվել, բայց այդ շենքն էլ ինքնին այնքան խնդիրներ ունի, որ դրանք հաղթահարելը թվում է՝ անհնար է:

-Կար ժամանակ, երբ արվեստի բնագավառի որեւէ մասնագետ գեղարվեստաթատերական ինստիտուտում իր կուրսն էր հավաքում, այդ պրակտիկան դեռեւս շարունակվո՞ւմ է:

-Ավելի շատ դա վերաբերում է Թատերական ինստիտուտին, բայց մեր ինստիտուտում նույնպես կիրառվում է այն: Գեղանկարչության եւ քանդակի բաժիններն ընդունվողները առաջին երկու տարին սովորում են մի որեւէ դասախոսի մոտ եւ իրենց հիմնական ակադեմիական որակավորումն են ստանում: Մեր լավագույն դասախոսներն ունեն իրենց արվեստանոցները: Այդ երկու տարուց հետո ուսանողների եւ դասախոսների ցանկությամբ ձեւավորվում են կուրսերը՝ ըստ փոխադարձ նախասիրությունների: Այսինքն՝ ի վերուստ պարտադրվածություն չկա:

-Այսօրվա ուսանողներն արդյոք չե՞ն սովորում հանուն դիպլոմի:

-Ընդունելության քննությունների ավարտից հետո, արդեն երեք տարի է, ես, ուսանող դարձած դիմորդներին շնորհավորելով, միաժամանակ ասում եմ, որ նրանք ձեռք են բերելու մի այնպիսի մասնագիտություն, որը նվիրում է պահանջում եւ այն էլ՝ բանական նվիրում: Այդ ճանապարհը մաքառումների ճանապարհ է, որտեղ մարդը կարող է շատ այլ բաներից զրկվել: Ես նրանց ասում եմ նաեւ, որ եթե իրենք մի օր տեսնեն, որ ձանձրանում են այստեղ, պետք է թողնեն եւ գնան: Ինչո՞ւ պետք է մարդը մի գործով շատ ընդգրկուն բառով՝ հայրենասիրությունը, քանզի ամեն ինչի հիմքը հայրենասիրությունն է: Այդ հայրենասիրությունը եղել է ու կա եւ Քոչարի, եւ Արամ Խաչատրյանի, եւ Շարլ Ազնավուրի, եւ Էդվարդ Իսաբեկյանի արվեստում: Արվեստի եւ ընդհանրապես բոլոր մեծերի ստեղծագործություններում այդ հայրենասիրությունը կա, որն ավելի թույլերի մոտ պակասում է: Այսինքն՝ արվեստագետն ուժեղ է այնքանով, որքանով հայրենասեր է:

-Շատ նկարիչներ բողոքում են, որ ցուցահանդեսներ քիչ են կազմակերպվում, արտաքին աշխարհի հետ շփումներ չկան, ունեցած նկարները վաճառելու հնարավորություններ գրեթե չեն ստեղծվում: Դուք նաեւ Նկարիչների միության գեղանկարի բաժանմունքի վարիչն եք: Ի՞նչ կասեք այս կապակցությամբ:

-Այդ ասպարեզում մի քիչ ավելի լայն գործունեություն կարող էր ծավալել Մշակույթի նախարարությունը: Ես այսօր չեմ հասկանում այդ նախարարության գործունեության ասպարեզները, չեմ հասկանում, թե ինչի՞ համար գոյություն ունի Մշակույթի նախարարությունը: Գոյություն ունեն Նկարիչների միությունը, Գեղարվեստի ինստիտուտը եւ Թերլեմեզյանի անվան ուսումնարանը: Կերպարվեստի քարոզչության, երիտասարդների դաստիարակության, ցուցահանդեսների հարցերով հիմնականում մենք ենք զբաղվում եւ ոչ թե նախարարությունը: Պետությունից, բացի աշխատավարձից, ուրիշ ոչինչ չենք ստանում:

Ֆրանսիայի մշակույթի նախարարությունը տարին երկու-երեք անգամ ցուցահանդեսներ է բացում եւ նկարիչներից նկարներ գնում: Ամբողջ Ֆրանսիայով մեկ բացված են հիանալի թանգարաններ, որոնց ստեղծմանը (հարկային ճիշտ քաղաքականության հետեւանքով) մասնակցում են տեղի մագնատները: Նրանք մասնակցում են նաեւ մշակույթի կենտրոնների ստեղծմանը: Մենք էլ ունենք այդպիսի նպատակ:

Մշակույթի նախարարությունը ձեռքը թափ է տվել բոլոր ստեղծագործական միությունների վրա: Հարց է առաջանում. մշակույթի նախարարության խնդիրը ո՞րն է, որպեսզի հետո գնան եւ ներկայացնե՞ն մեր արվեստը Ֆրանսիայում, Ռուսաստանում... իրենք էլ որոշեն, թե ով է գնալու, ով չի գնալու: Բա եղա՞վ:

Ընդհանրապես անհրաժեշտություն կա ծավալով փոքր պատկերասրահների թիվն ավելացնելու: Մոսկվայում արդեն կան այդպիսիք, այնտեղ ամեն մի պատկերասրահ ունի իր նկարիչները: Սա էլ մի ձեւ է, որն ապագա ունի...

Հարցազրույցը վարեց
ՕՍՄՐԻ ԽԵՉՈՅԱՆԸ

07.1996